

Փխ. Նովաւ կատարի հին օրէնքն եւ նորս :

Փխ. Սէր ի յերկինս հասուցանէ զառ ի նմանէ լցեալսն :

Եւ կրկնի. Ուր եւ իցէ սէր Աստուծոյ, եւն :

Փխ. Որպէս սէրն միացուցանէ զհեռացեալսն, նոյնպէս ատելութիւնն բաժանէ զմիացեալսն :

Փխ. Ձի սէրն ունի կրկին պատուիրան, որով սիրի Աստուած եւ եղբայր :

Եւ կրկնի. Ուր եւ իցէ սէր Աստուծոյ, եւն :

Փխ. Միով սրտիւ աղաչեցուք ցրարձրեալն Աստուած :

Փխ. Ձի տացէ խաղաղութիւն յաւուրս մեր :

Փխ. Ծնորհեցէ հաւատ եւ յոյս եւ զործք բարի :

Փխ. Եւ տացէ մեզ զկցորդութիւն վերին քաղաքացեացն :

Եւ կրկնի. Ուր եւ իցէ սէր Աստուծոյ, եւն :

Փխ. Երանելեացն նմանեցուք զի գ՛րբխտոս զէմ յանդիման տեսցուք :

Փխ. Այս է անչափ ուրախութիւնն :

Փխ. Եւ մնա յաւիտեանս յաւիտենից, ԱՄԷՆ :

«ՏԵՃԻՎ» ԲԵՌԻ ՍՏՈՐԳԱՐԵՆՈՒԹԻՐՆԸ ԵՒ ՊԵՇԻՎԵՐԵՎԵՆ ՏՈՒՆԵԼՆԵՐԸ

«Տաճիկ» բառը պատկանում է այն բաւերի թւին, որոնց ստուգարանութիւնը հեղտութեամբ երեւան չի գալիս, այս է պատճառը, որ նրա մասին արտայայտուել են տարօրինակ կարծիքներ. սակայն արդէն Ք. Պատկանեանը, մանաւանդ Հ. Հիւրջմանը, տալիս են «Տաճիկ» բառի մասին ճիշտ տեղեկութիւններ :

Այսպէս Հիւրջման, իր ստուգարանական բառարանում (Armenische Grammatik, մասն I), էջ 86—87, համադրում է «Տաճիկ» բառը պահլաւերէն *tāčik* (տաչիկ) բառի հետ, որ նշանակում է «արար» եւ «արարական». ապա յիշում է նոր պարսկերէն *tāzi* (թալի) բառը «արարական» իմաստով, որ առաջա-

ցել է քայ (طی) ցեղի¹ անունից *čik* (չիկ) անունից յաւելմամբ, ինչպէս հայերէնում «սաղճիկ»², որին համապատասխանում է նոր պարսկերէնի *sagzi* (սագչի), «sag» բառից, որ հին պարսկերէնի *saka* բառն է (սակացի), ինչպէս նաեւ *rāčik* (ռաչիկ) բառը, որին նոր պարսկերէնում համապատասխանում է *rāzi* (ռալի) բառը՝ «Ռէյ քաղաքացու» նշանակութեամբ (հայերէն՝ ռաժիկ) :

Այստեղ մենք երկուութիւն ենք նկատում. բառը, ինչպէս տեսանք, համադրում է պահլաւերէնի *tāčik* (տաչիկ) բառի հետ, բայց տրւում է ոչ թէ այդ բառի, այլ նոր պարսկերէն «թալի» ձեւի ստուգարանութիւնը :

Արդ, պահլաւերէն *tāčik* (տաչիկ) կամ նորաձեւ արտասանութեամբ *tāčik* (տաչիկ) բառը ունի երկու գլխաւոր նշանակութիւն. 1. արար (միջազեացի) եւ 2. արադավազ, որ կիրարւում է ձիու, ուղտի եւ (որսի) շան համար : Եթէ կապ կայ այդ երկու նշանակութիւններին, դա պէտք է լինի հետեւանք արարների արադաշարութեան եւ ուրեմն երկու դէպքում էլ բառի ծագումն ուղղում է դէպի պահլաւերէն *tāčitan* (տաչիտան) կամ *taxtan* (թախտան) նոյնարմատ եւ նոյնանիշ բառերը, որ նշանակում են «վազել» :

Այս բոլորից յետոյ Յ. Թիրեաքեան, որ յամենայն դէպս Հիւրջմանի ստուգարանական բառարանն ունեցել է ձեռքի տակ, իւր «Արիահայ բառարանում», որտեղ սպասելի էր բառի բազմակողմանի ուսումնասիրութիւնը, գրում է. «Տաճիկ-նայ. تاجيك [թալիկ] կամ تاجان [թալիկ]. ճիշտ եւ որոշ մեկնութիւն մը չը տեսայ այս բառին. պարսիկները ասով կ'իմանան պարսկաստան անած մեծցած արարները. իսկ արարներուն առ հասարակ ىزان [թալի] անունը կու տան : Յայտնի է, որ միեւնոյն բառն է» . եւ ուրիշ ոչինչ :

Բառիս վրայ երկար կանգ է առել աղբային հմուտ բանասէր Հր. Աճառեանը իր Արմատական բառարանում, որ ի նկատի ենք ունեցել այն յօդուածը գրելիս :

Բայց ի՞նչ աւրնչութիւն կայ արարների եւ տաճիկների (թուրքերի) մէջ, որոնք երկու բոլորովին տարբեր ցեղեր են :

¹ Այս ցեղից կ'իյախն տուեց Խոսրով Ապրուկզ Հիւրայի արարական թագաւորութիւնը, սպանելով Նուսան Գ. թագաւորին, որ քրիստոնէութիւն էր ընդունել :
² Հմ. Մ. Խորենացի Բ. Բ. :

Ինչպէս տեսանք, տաճիկ անուանում էին միջազեացի արարները զեռ այն շրջանում, երբ ներկայ տաճիկները մասին ոչինչ յայտնի չէր : Այսպէս Եղիշէն (ա. յեղանակ) գրում է. «Գունդ կազմէր ի Հայոց մեծաց գաղատ եւ զաղատորդի եւ յարքունի տանէ զոստանիկ մարդիկ. ըստ նմին օրինակի ի վրաց եւ յԱղուանից եւ յաշխարհէն Լիւնաց ծոցն էին մտել, սկսեցին անուանել նոյն «տաճիկ» անունով. այսպէս «տաճիկ» անուանեցին սելջուկեան թուրքերը, որոնք արշաւել էին արեւմուտք՝ Միջագետք եւ խառնուել էին տեղացի արարներին հետ³. այնուհետեւ հերթը հասաւ Օսմանցոց եւ որովհետեւ վերջիններս մերձաւորութեան հետ ունեցան եւ պատմական կայունութիւն, ուստի «Տաճիկ» բառը սեպակականութիւն դարձաւ նրանց եւ աւելի գործածական դարձաւ մեր ժողովրդի բերնում, քան համապատասխան «թուրք» կամ «օսմանցի» բառերը :

Այս երկու ստուգարանութիւններին գուրդնից կայ եւ մի երրորդ — ժողովրդական, որ ինքնին ստուգարանական արժէք չէ ներկայացնելով, ցոյց է տալիս, թէ որքան հին է «տաճիկ» յորջորջումը պարսիկներին բերնում արարների վերաբերմամբ :

Բունդահէշը, որ պարունակում է մի շարք տեղեկութիւններ մազըեգական աւանդութեան աշխարհածնութեան, առասպելաբանութեան եւ աւանդական պատմութեան վերաբերեալ, պատմում է⁴ Աւրիմանի վեց դրոհների մասին, որ նա ունեցաւ Ահուրա-մազդայի ստեղծագործութեան վեց տարրերի մարտի : Սրանցից վերջինը իւր մասը գտաւ (ինչպէս եւ եղը) գրոհի ժամանակ, թողնելով երկուտրեակ զաւակներին՝ Մաշխային եւ լով երկուտրեակ զաւակներին Մաշխային : Սրանք երկար գայթակղութիւնները — երկուսն էլ իր թուրքերով փոխադարձ յետոյ յիտուն տարին բոլորելով փոխադարձ ուէր են զղում եւ ծնում են եօթ վոյգ զաւակներ, որոնց միացումից սերւում է տասն եւ հինգ սերունդ, իսկ ժամանակի ընթացքում՝

³ Տ. Հ. Աճառեանի յիշեալ յօդուածը :
⁴ Գլ. Գ. եւ շար. :

նաեւ ամբողջ մարդկութիւնը : Այդ 15 ցեղերից իննը ցրւում են միւս վեց երկրներին մէջ⁵, իսկ վեցը մնում են Խաւնիրասում : «Այն վեց ցեղերից մի զոյգի տղամարդու անունն էր քազ (կամ քաչ) եւ կնոջը քազակ (քաչակ) եւ նրանք զնացին տաճիկներին (արարական) հարթութիւնը⁶ : Ահա ուրեմն որտեղից են սերւում տաճիկները եւ որտեղից է դալիս. նրանց անունը — Գայոմարտի՝ նախամարդու անմիջական սերնդներից :

Անհետաքրքիր չեն նաեւ հետեւեալ տեղեկութիւնները Դահակ (ըստ Ֆէրդուսու՝ Չոհակ) առասպելական թագաւորի մասին, որ Արաքիայից հրաւիրուել էր իշխելու Չամշիդ մեծ թագաւորի փոխարէն, որ յաւակուելու օրէն արեւմուտք՝ Միջագետք եւ խառնուել էին տեղացի արարներին հետ³. այնուհետեւ հերթը հասաւ Օսմանցոց եւ որովհետեւ վերջիններս մերձաւորութեան հետ ունեցան եւ պատմական կայունութիւն, ուստի «Տաճիկ» բառը սեպակականութիւն դարձաւ նրանց եւ աւելի գործածական դարձաւ մեր ժողովրդի բերնում, քան համապատասխան «թուրք» կամ «օսմանցի» բառերը :

Այժմ հարց է առաջ գալիս — տրուած ստուգարանութիւններից ո՞րն ընդունել որպէս ուղիղ : Մի կողմ թողնելով քազի անունն աւանդական բացատրութիւնը ըստ պահլաւական աղբյւրների վերը յիշած դիտումներով, մենք կանգ կ'առնենք երկու ստուգարանութիւնների վրայ, որոնցից մէկը ընձեռում է «Տաճիկ» բառը որպէս առաջացած *tač* (տաչ) արմատից (եզակի զ. զ. *tačet*), իսկ միւսը՝ կազմուած *čik* (չիկ) անունիցի միացումից քայ) ցեղանունի հետ :

Դրանցից առաջինը կարօտ է «արար» եւ «վազել» զաղափարների մէջ հոգեբանական զուգորդում հաստատելուն, որ ձգտումների հետ է կապուած եւ այդ տեսակէտից գերա-

⁵ Աշխարհը բաժանում է ըստ պահլաւ աւանդութեան եօթն երկրների (Բշար), որոնց կենտրոնում գտնուում է Խաւնիրասը :
⁶ Բունդահէշ, գլ. 25, § 28 :
⁷ Միւսմարք Մաշխա եւ Մաշխայի եօթն վոյգ զաւակներից մէկի անուն էր :

զատելի է Հիւրըմանի ստուգարանութիւնը, որով ստացում է իսկապէս երկու ստուգարանութիւն՝ մէկը քայ ցեղանունի միջոցով՝ տաճիկ (արար) ցեղի համար, իսկ միւսը քազ արմատի միջոցով՝ արազավազ կենդանիներէ:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարսկերէնում «Տաշիկ» բառը գործ է ածուած իրանական տարրը բնորոշելու թուրքաստանում եւ հազիւ երբեմն «արար» իմաստով եւ որ «արար» գաղափարի իսկական արտայայտողն է «թազի» բառը, ինչպէս եւ արազավազ նոյնը, ուղտի եւ որսի շան, փորձենք ցոյց տալ հայկական «Տաճիկ» եւ պարսկական «Թազի» բառերի մէջ եղած կապը:

Հարցը պարունակում է մի քանի մանրամասնութիւններ, որոնք հետեւեալներն են:

1. Այդ բառերից մէկի թ եւ միւսի Տ հնչիւնները առերեւոյթ տարբերութիւն են միայն. պարսկերէնում եղել է եւ կայ մի հատ է, որ ներկայ պարսկերէնում արտասանում է թաւ որպէս հայկական ք. հնունն այդ հնչիւնն անշուշտ է-ի (տ-ի) արտասանութիւն է ունեցել եւ այդ ժամանակ փոխառուել է հայերէնում «Տաճիկ» բառը Տ արտասանութեամբ. հմ. «տաշել», պհլ. *tāštan* [տաշիտան]. «տաշտ», պհլ. *tašt* [տաշտ]. «տապ», պհլ. տապ, մինչդեռ նոր պարսկերէն քաբ եւայլն:

2. Բառերից մէկում և հնչիւնն է լուում, իսկ միւսում գ. շ-ի, Թ-ի եւ շ-ի արտասանութիւնը հնունն աւելի ընդարձակ էր, ինչպէս *žan* [ժան] «կին», *žatan* [ժատան] «խիւն», *zamān* [ժաման] «ժամանակ» (որ առաջացել է այս բառից): Ժամանակի ընթացքում գրական լեզուում տիրապետող հանդիսացաւ գ արտասանութիւնը, թողնելով Թ, շ որպէս աւանդ պարսկական բարբառներին. քազի բառի գ հնչիւնն էլ նախնական շ-ն է, որ հայերէնում և-ի է փոխուել, ինչպէս եւ հետեւեալ բառերում. փաշ, պհլ. շաշտ, նոր պարսկերէն շաշտ. փախարակ, պհլ. շախար, նոր պարսկ. շախար. փախարակ, պհլ. շախարակ, նոր պարսկ. շախարակ եւն:

3. Իկ եւ ի վերջաւորութիւնները. Տաճիկ բառը պատկանում է այն բառերի թւին, որոնք ունին իկ [իկ] վերջածանց, որի կ հնչիւնը մեծ մասամբ սղուում է նոր պարսկերէնում. այսպէս պահլաւական գրամիկ

բառը, որ «յարդելի, սիրելի» իմաստն ունի, նոր պարսկերէնում արտասանում է گرامی գրամի. — պհլ. պարիկ բառը, վհուկ նշանակութեամբ, նոր պարսկերէնում փարի է դարձել «փէրի» նշանակութեամբ: Պհլ. *pē-šānik* [պէշանիկ] «ճակատ» նոր պարսկերէնում «փիշանի» ձեւն է ընդունել նոյն իմաստով: Պհլաւական գրամիկ բառը («երկիր, դեպի») Թէրատլսու մօտ մենք գտնում ենք *zamī* [զամի], իսկ ընթացիկ պարսկերէնում գրամի: Այսպէս էլ պհլ. *kaštīk* [կաշտիկ], որ նշանակում է նաւ, նոր պարսկերէնում վերածուել է փաշտի-ի: Այս շարքից են նաեւ գետիկ («աշխարհային»), նոր պարսկերէնում քիթիկ [քիթի], փամիկ («անուանի»), նոր պարսկերէնում փամի, *ruspīk* [ռուսպիկ] «անբարոյական կին», նոր պարսկերէնում ռուսիի (գործածական նաեւ հայերէնում), *tohīk* [թոհիկ] «գառարիկ», նոր պարսկերէնում քոնի, այլ եւ այնպիսի բառեր, ինչպէս են *k(a)nīk* «կին, կնիկ», *naz-dīk* «մօտիկ», *ramīk* «ռամիկ», *šarpīk* [շարպիկ] «շապիկ», *daštānīk* [դաշտանիկ] «դաշտան ունեցող կին» եւն:

Այսպիսով «Տաճիկ» բառի ներկայ նշանակութիւնը նոր է. հինը վերաբերում էր արարներին, յատկապէս Ասորիքի արարներին: «Տաճիկ» (թազի) բառի երկրորդ նշանակութիւնն է արազավազ անասուն՝ ձի, ուղտ, շուն. — «Տաճիկ» բառի ստուգարանութիւնը կրկնակի է քայ ցեղանունից + չիկ անանցից եւ թազ (Տազ) արմատից, կամ կարելի է մի ընդունել՝ արարի եւ արազաշարժութեան գաղափարները ասոցիացիայի մէջ զննելու պայմանով: — «Տաճիկ» գաղափարի արխայիկ բնութիւնն ասպացուցում է քազ կամ քաշ էպոնիմի աւանդութեան ներկայութեամբ: — «Տաճիկ» գաղափարն իր հոլովոյթն է ունեցել՝ բովանդակելով աստիճանաբար «արար», «սելջուկ», «թուրք» գաղափարները: — «Տաճիկ» եւ «Թազի» բառերը նոյնն են. ներկայ պարսկական ք-ն նախկին է-ի բնաշրջումն է. գ արտասանութիւնը հետեւեանք է չ հնչիւնի հոլովոյթի նոր պարսկերէնի մէջ եւ և-ն հայերէնում փոխանցումն է պահլաւական չ հնչիւնի: Կ վերջաւորութեան ներկայութիւնը պահլաւերէնում օրինական է, նրա բացակայութիւնը նոր պարսկերէնում նոյնպէս օրինական է՝ բնաշրջման օրէնքի հիման վրայ:

Ռ. ԱՐԲԱՆՍՅԱՆ
Ուսուցչապետ Թեհրանի Համալսարանի:

Über die phrygischen Sprachreste und ihr Verhältnis zum Armenischen.

1.

Auf Grund weniger Anhaltspunkte, die zum Teil für derartige Schlüsse zu allgemein sind (*bh > b*, über die Endung *-or* vgl. Holger Pedersen, Hettitisch und die anderen indogermanischen Sprachen, Kopenhagen 1938, S. 103), zum anderen Teil überhaupt nicht feststehen, nimmt man eine nähere Verwandtschaft des Phrygischen mit dem Armenischen an. Ich glaube, daß sich über das Verhältnis dieser beiden Sprachen Näheres sagen läßt:

Hübschmann behandelt (Armenische Grammatik, Bd. I/2, S. 397) armenisch *հարթ hart* „eben, platt, flach“, das sich auch im Georgischen und anderen (nur!) südkaukasischen Sprachen (*p'art'o* usf.) findet; Hübschmann erwägt zufällige Ähnlichkeit und beruft sich auf die nicht ganz identische Bedeutung „weit, ausgedehnt, breit“ der kaukasischen Wörter. Doch ist Entlehnung aus dem Armenischen wohl das Nächstliegende, falls sich das armenische Wort indogermanisch erklären läßt.

Da nun armenisches *h-* auf altes *p-*, armenisches *-ar-* auf *-r-* u. dgl., armenisches *-rth-* nur auf *-rth-* zurückgehen kann, ist ein Zusammenhang mit den iranischen Entsprechungen von ai. *pythu-* im Bereiche des Wahrscheinlichen (aber nicht als Erbwort, da dieses ein *-l-* [nicht *-r-*] haben müßte, das Erbwort ist arm. *layn*, Meillet, Esquisse, Index): Nur direkte Entlehnung aus dem Persischen kommt nicht in Frage, weil alle bekannten Entlehnungen aus dem Iranischen *n a c h* der ersten armenischen Lautverschiebung erfolgt sind: *p* bleibt erhalten. Nun ist durch einen glücklichen Zufall gerade dieses Wort in einer phrygischen Inschrift überliefert. Friedrich, Kleinasiatische Sprachdenkmäler, S. 125 ff., Nr. 50: *Γης παρθε|κα I δ|κα|ω|χην* Hierin ist *ω|χην* zweifellos gleich *ε|χην*, ich lese: *Γης παρθε κα| δ|κα|ω|χην*, „der Ge Parthe und der Dike Verehrung“. Zum In-

halt vgl. die Inschrift 16¹:... *Μηνι ουραν|ω x'Απολλωνι ε|χην* u. ä. Die Vermischung von Genitiv und Dativ ist für Phrygien altbekannt, sie wurde schon von Solmsen, KZ, 34, S. 51, Anm., mit Beispielen belegt. Fälle in phrygischen Inschriften werden wir weiter unten vorfinden. Wir haben also eine Göttin Ge mit dem Beiwort „*parthe*“ vor uns, und für *parthe* liegt Entlehnung aus arisch **prthvi* (für **plthvi*) auf der Hand: kennt doch auch der Avesta eine *zam pər'p̌wīm*.

Einen ganz ähnlichen Fall vermutete ich WZKM, 45, S. 131, in phryg. *σταρνα* „Grabmal, *†σ|τ|λ|η*“: *εν σταρνα δοουρ|κε* = „in *σ|τ|λ|η* *θωμ|φ|τε*“; *δοουμο* = *†θωμ|ός* = (Grab-) hügel (Inscription 48), das ich als Entlehnung aus einem iranischen Dialekt in der Form **star'na* aus **sth'na* zu erklären versuchte.

Phryg. *Parthe* ist nun Dativ des Femininums **parthi* (für **parthvi*) mit der im Phrygischen wuchernden Endung *-ei-*, *-e* der *i*-Stämme (*χνουμανε* neben *χνουμανει* liegt mindestens sechsmal in den Inschriften 26, 37, 40, 57, 63, 78 vor). Ebenso ist arm. *hart* ein *i*-Stamm (wie in vielen Fällen auf Grund des Femininums, Meillet, Esquisse, S. 75 ff.). Und Phrygisch ist die Sprache, für die das dem arm. *hart* zugrunde liegende *-th-* anzusetzen ist: denn im Phrygischen wechselt *τ* in der Nähe von *r* mit *θ*, wodurch die Lautung *-rth-* (und nicht *rθ-*) sichergestellt ist (vgl. *διθρερα* [31] *διθρεφα* [49] *παρθε* [50] neben *παρτης* [+2, 87] *μ|τρα|φα|τα* [48]). Auch [65] *ηθ|ι|τε|τε|τι|χ|με|νο|ς* neben sonstigem *ε|ι|τε|τε|τι|χ|με|νο|ς* spricht für den Lautwert *-th-*, nicht *θ*.

Wenn also das Phrygische gerade in der Verbindung mit *r* ein *th* besaß, dann ist es mit größter Wahrscheinlichkeit die Sprache, aus das Wort **parthvi* ins Armenische gelangt ist.

Ehe ich nun mit der Besprechung der anderen Hinweise auf Lehnbeziehungen zwischen Phrygisch und Armenisch fortfahre, gebe ich zunächst einige weitere Deutungsversuche an phrygischen Inschriften, deren Ergebnisse für das Folgende von Bedeutung sind.

¹ Ramsay, Phrygian Inscriptions..., KZ, XXVIII, S. 394. Dort wird auch die Inschrift *Ααδα Κανκαρον Νουναδος Ονεκροκομητισσα Αι Παρ|α| ε|χην* zitiert. Ebenso Inschrift 52: ... *Θρον|δι|φ| ε|χην*, usf.